

**ՍՐԲՈՒՅԻ ՀՈՒՓՄԻՄԷԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՂՄԷ**

Այսու հոգեկան գոհունակութեամբ կը հաղորդենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի Հովանաւորութեամբ եւ Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի կազմակերպութեամբ՝ Ատենապետութեամբ Տիկին Արաքսի Պոյամեանի, Տիկնանց Միութեան «Սրբուհիներու Նուիրուած» տօնակատարութիւնը այս տարի ձօնուած էր Սրբուհի Հռիփսիմէի, որ հանդիսաւոր կերպով նշուեցաւ թեմիս չորս շրջաններուն մէջ:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ**

Կեդրոնական Գալիֆորնիայի մէջ տօնախմբուեցաւ Երեքշաբթի, Փետրուար 16ի առաւօտեան, Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Արարողութեան հանդիսապետեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Ս. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Մասնակցեցան Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Արշէն Աւագ Քինյ. Այվազեան, Եղեմի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Վարդան Աւագ Քինյ. Գասպարեան, Ֆաուլըրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Կեդրոնական Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Ս. Եղիա Աւագ Քինյ. Հայրապետեան եւ իրենց Ծուխերուն հաւատացեալները, ինչպէս նաեւ Ռիտլիի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ եւ Թըրլաքի Սուրբ Խաչ Հայց. Եկեղեցւոյ հաւատացեալները: Կեդրոնական Գալիֆորնիայի հոգեւորականներէն Արժ. Ս. Գեորգ Աւագ Քինյ. Առաքելեան եւս մասնակցեցաւ արարողութեան:

Արարողութեան մասնակցեցաւ նաեւ Առաջնորդարանի Եկեղեցական Երաժշտութեան Վարիչ եւ Լա Վըրնի Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան: Իսկ Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի կողմէ մասնակցեցան Ատենապետ՝ Տիկին Արաքսի Պոյամեան՝ Պըրպէնքի Հայց. Եկեղեցիէն, Տիկին Պէքի ճորճորեան՝ Գանձապահ, Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցիէն, Տիկին Ալիս Իսկէնտերեան՝ Խորհրդական, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցիէն եւ Տիկին Սառա Տէր Սաթոյեան՝ Խորհրդական, Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցիէն:

Արարողութեան ընթացքին Արժ. Ս. Արշէն Աւագ Քինյ. Այվազեան եւ Տիկին Արաքսի Պոյամեան Անգլերէնով խօսեցան Սրբուհի Հռիփսիմէի կեանքի եւ նահատակութեան մասին: Հայերէնով Սուրբ Գրային ընթերցումներ կատարեցին Երեցկին Սիրարփի Այվազեան, Փոլին Պասմաճեան եւ Զարուհի Վարդանեան: Իսկ Անգլերէնով՝ Անէթ Սուշիկեան, Ռուպի Թուփուզեան եւ Իզապէլ Զիլփիկեան: Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Ս. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան կատարեց փակման խօսքը եւ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները փոխանցեց եւ գնահատեց Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդին մատուցած ծառայութիւնները՝ Ատենապետութեան Տիկին Արաքսի Պոյամեանի: Ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով վերջ գտաւ արարողութիւնը, որւն յաջորդեց ընկերային հաւաքն ու հիւրասիրութիւնը եկեղեցւոյ սրահին մէջ:

**ՀԱՐԱԼԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ**

Հարաւային Գալիֆորնիայի մէջ Չորեքշաբթի, Փետրուար 17ին տօնախմբուեցաւ Լա Գանիատայի եւ Քրետէնթա Հովիտի Հայց. Եկեղեցւոյ մէջ: Արարողութեան հանդիսապետեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Ս. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Ներկայ էին աւելի քան 90 հաւատացեալներ: Ներկայ էին նաեւ՝ Հոգշ. Ս. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան, Արժ. Դոկտ. Ս. Զաւէն Աւագ Քինյ. Արզումանեան, Լոս Անճելըսի Ս. Յակոբ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեան, Հովիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Ս. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեան եւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Սարգիս Աւագ Քինյ. Փէթոյեան:

Հոգեւորականներու առաջնորդութեամբ կատարուեցաւ Սուրբ Հռիփսիմէ Կոյսին նուիրուած արարողութիւն եւ երգուեցաւ Կոմիտաս Կաթողիկոսի կողմէ գրուած «Անձինք նուիրեալք» գեղեցիկ շարականը:

Լա Գանհատայի Ծուխի չորս տիկիներ՝ Մելինե Աղաճանեան, Մարի Քարնիքեան, Անի Չաքարեան եւ Անահիտ Տէրեան յաջորդաբար Հայերէն եւ Անգլերէն լեզուներով կարդացին Աստուածաշնչային ընթերցուածներ:

Արարողութեան աւարտին Լա Գանհատայի եւ Քրէստնթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան բարի գալուստ մաղթեց բոլորին: Ապա Անգլերէն լեզուով ներկաներուն բարի գալուստ մաղթեց Տիկնանց Կեդրոնական Մարմինի Ատենապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեան:

Սուրբ Հռիփսիմէ Կոյսի մասին հայերէնով խօսեցաւ Հոգեւոր Հովիւը, որ մասնաւորաբար շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ Տիկնանց Կեդրոնական Մարմնին այս գեղեցիկ առիթին համար, ապա Տիկնանց Միութեան Ատենապետուհի՝ Տիկին Լեւա Սիմոնեան Սուրբ Հռիփսիմէ Կոյսին ներկայացուց անգլերէն լեզուով: Իսկ Տիկին Արաքսի Պոյամեան ներկայացուց Սրբուհի Հռիփսիմէի կեանքն ու նահատակութիւնը: Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդէն ներկայ էին Արփի Պարսամ, Այտա Սէթեան, Ալիս Իսկէնտէրեան, Մելինե Աղաճանեան եւ Անի Լանուգա:

Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի անունով իր գնահատանքը յայտնեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Արարողութենէն յետոյ ներկաները հրաւիրուեցան ճաշի եկեղեցւոյ բակին մէջ: Եղան նաեւ սրտաբուխ նուիրատուութիւններ: Ներկաները գոհունակութեամբ հրաժեշտ տուեցին Լա Գանհատայի հիւրընկալ Ծուխին:

### ԼԱՍ ՎԵԿԱՍՍ, ՆԵԻՍՍՍ

Հինգշաբթի, Փետրուար 18ին, տօնախմբութիւնը տեղի ունեցաւ Լաս Վեկասի Հայց. Եկեղեցւոյ մէջ, որուն հանդիսապետեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: Մասնակցեցան Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Սերոբ Քինյ. Ազարեան, Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի Ատենապետ՝ Տիկին Արաքսի Պոյամեան եւ Խորհրդական՝ Տիկին Ալիս Իսկէնտէրեան:

Սուրբ Գրային ընթեցումը կատարեց Օլկա Գրիգորեանց: Սրբուհիի մասին Հայերէնով խօսեցաւ Արժ. Տ. Սերոբ Քինյ. Ազարեան, իսկ Տիկին Արաքսի Պոյամեան՝ Անգլերէնով: Փակման խօսքը եւ օրհնութեան աղօթքը կատարեց Հայր Սուրբը:

### ՀԻՄԻՍԱՍՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ուրբաթ, Փետրուար 19ին, տօնախմբութիւնը տեղի ունեցաւ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ մէջ, որուն հանդիսապետեց Սանթա Գլարա Հովիտի Սուրբ Անդրէաս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդը՝ Արժ. Տ. Տաթև Քինյ. Յարութիւնեան, որ իր բարի գալուստեան խօսքը ուղղեց Տիկիններուն: Արարողութեան Մասնակցեցան հիւրընկալ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեան, Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տիրան Քինյ. Աւագեան եւ Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ասողիկ Քինյ. Ժամկոչեան եւ յիշեալ Ծուխերուն հաւատացեալները: Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդէն մասնակցեցան Պէքի ճորճորեան, Սառա Տէր Մաթոյեան եւ Ալիս Իսկէնտէրեան:

Տիգի Կարապետեան եւ Սեդա Եազըճեան Սուրբ Գրային ընթերցումներ կատարեցին Հայերէնով, իսկ Սեզա Տօմինկէզ՝ Անգլերէնով: Սրբուհիի կեանքին եւ նահատակութեան մասին Հայերէնով խօսեցաւ հիւրընկալ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեան, իսկ Անգլերէնով՝ Արաքսի Պոյամեան:

Արժ. Տ. Տաթև Քինյ. Յարութիւնեան Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները փոխանցեց բոլորին եւ գնահատեց Տիկնանց Միութեան ծաւալած հոգեւոր ծառայութիւնները յատկապէս Մեծ Պահքի ընթացքին՝ որպէս գեղեցիկ մտատիպար ունենալով Սրբուհի Հռիփսիմէն, որ իր քրիստոնէական հաւատքին համար յանձն առաւ նահատակութիւնը քան թէ աշխարհիկ փառքերը: Ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակեց օրուան նուիրուած յատուկ արարողութիւնը, որուն յաջորդեց ընկերային ժամն ու հիւրասիրութիւնը եկեղեցւոյ սրահին մէջ: